



ՀԱՄԱՐԱԿԱՆԵՐ ՌՈՒՍՆԵՐՅ ԼՐԱԳԻՐը հրատարակուում է իւրաքանչիւր ամսի 10 ին և 20 ին. տարեկան գինը ՃՈՒՆԻՍՏԻ հետ 'ի միասին է 5 ռուբ. արծաթ. իսկ կէս տարուանը 3 ռուբ. արծ. կանխիկ վճարելի:

**ԳՐԻԳՈՐ ՏԵՐ ՄԿՐՏՉԵԱՆ ՄԱԼՆՑԵԱՆՑ**

(ՎԵՐՋ)

Մինողի առաջին բացման ժամանակը, նորա աստիճանաւոր ծառայողների մէկն եղաւ Մալնցեանցը, և բովանդակ թովմայ Յովսէփիչ Ղորղանով Պրոկուրորի օրովը՝ կառավարիչ էր նա, և Եթողոյ հինգ գիւղորէիցը, այս ժամանակների մէջ ստացաւ երկու աստիճան Ղուլէփսիկ Րէզիստրատորի և Գուբերնսիկ Սեկրետարի:

Մալնցեանցան Յովհաննէս Աթուղեկոսը և թովմայ Յովսէփիչը. ուստի և Գրիգոր Մալնցեանցը արդէն տաղակացած լինելով ծառայութիւնից՝ սկսել էր առևտրական գործով պարապել, որու մէջ՝ աւելի կարողացաւ այնուհետև ազգօգուտ գործեր ունենայ:

1843 թուականին Մալնցեանցը հանգուցեալ Յովհաննէս եպիսկոպոս Էլասիսթուսեանցի և բժիշկ ազնիւ Վասակեանի հետ որ խնդրած էին Մինողէն՝ յօգուտ Եթողոյն՝ այժմեան եղած անտառը սկզբնաւորել, երջանկայիշատակ

‘Ներսէս Աթուղեկոսի երկրորդ տարին՝ յաջողեցաւ նոցա այս գործը, որոյ մասին Սրբազան Հայրապետը իւր կոնդակաւ գոհութիւն կտայ և հրաման 1848 թուականին Փետրուարի 21 ին: Իսկ լծակի բոլոր շինութեանը Սրբազան Հայրապետը գործակից կարգած էր Գրիգոր Մալնցեանցին, Մարտիրոս Եղայի հետ:

Բայց Գրիգոր Եղայի առաքինական գործքերը պանծացնողը՝ Վաղարշապատայ վարժարանի վերստին հաստատութիւնը եղաւ, որ ինչպէս վերը գրեցինք, 1833 թուականին՝ որ դադարած էր, Մալնցեանցը արդարև իբրև Վաղարշապատու Բարձրագոյն վարժարանի ընթացքը մշտնջենաւորելու համար՝ յանձն առաւ նորա վերստին բացման հողարարձութիւնը հրաւիրանօք երջանկայիշատակ ‘Ներսէս Աթուղեկոսին՝ ի 1856 ամի, ի 20 Մայիսի, որոյ մեծ յանձնարարութիւնները և սիշտ կատարած էր:

Միանգամ իւր վերայ առնելէն յետոյ Մալնցեանցը ուսումնարանի հողը, շատ նեղութիւն քաշեց, շատ արգելքներու տարաւ. բայց վերջապէս նորա յարատուութեան համար մշտնջենաւոր եկամուտ հաստատել տուաւ Վաղարշապատայ

**ՊԵՐՕՏ ՀԱՅՐԵՆԵԱՅ**

Ո՛հ օրեր օրեր ո՛հ սար ու ձորեր,  
Լ՛նը չէք երևում ո՞ր տեղն էք կորեր.  
Չեր միջին ո՞րքան կեանքս էր երջանիկ,  
Եւ սրտիկս ուրախ անո՞յշ Հայրենիք:  
Չեր պայծառ օդը ձեր քաղցր հողմունք,  
Օրհնուի այն ձեր սրբակերտ հիմունք.  
Եւն ձեր կենսատու կաթնասամ ջրեր,  
Իւրք բիւրոց դաշտեր, հազար առուակներ.  
‘Քանի մտածեմ՝ մաշվումէ հոգիս,  
Եպչած շուարած կը հայեմ չորս դիս,  
Չը կայ քեզ նման, սիրուն Հայրենիք,  
Դու իմ ծննդեան՝ անդեան տեղիք:  
Երարչի ձեռքը քեզ մէկ է ստեղծել,  
Եշխարհի միջին անհատ զարդարել.  
Եզեմայ չորս գետ քեզից են բխում,  
Ուր ու միւր դաշտերդ թանում:  
‘Քո մէջն է կանգնած ձերունին Մասիս,  
Պարծանք պարծանաց Հայկազեան ազգիս.

‘Կպտան ու Արագած քո ջուխտակ բերդեր,  
Որք սրտի մէջ կարօտ չեն ազգեր:  
Եւն հազար ու մէկ սիրուն վանքերդ,  
Օանազան տեսակ ինքնարոյս բերդդ,  
Ո՞ր աշխարհն ունի քո ունեցածներ,  
Թէկուզ մէկ տեղ գան բոլոր երկիրներ:  
Ես միայն զրկուած այս բիւր բարիքից,  
Վերջնկած պանտուկդ յաշխարհ վշտալից.  
Տեղի արտասուաց արիւն եմ լայի,  
‘Քո այս յատուութիւնը երբ միտս են գալի:  
‘Քո հողն էլ է սուրբ, քո վայրդ էլ մարտիր,  
Մարդից սկսած մինչև հասնի ջուր.  
Թէ հաւատ կասես, թէ սեր, թէ օրենք,  
Լչի քեզնումն է, ինչպէս հաստատ չէք:—  
‘Քեզնում ո՞չ Լուսեր, կալվին, Մակեդոն,  
Կըրցան հաստատել չարախառ կանոն.  
‘Քո հաւատ, քո ծէս է Աստուածաղիր,  
Որին չէ տիրել կեշտ խարեպատիր:

Ս. Վ. Մուշեղեանց:

սպանդանոցի տարեկան կապալադրամն. զանթարի տարեկան եկամուտը, և այլն, և այլն. որով փոքր միջոցի մէջ ուսումն հարանը լըոյց բնիկ Վաղարշապատցի հարկւրի չափ տղայով, և քաննի չափ տղայք ևս առաւ մերձաւոր գիւղերէն. սոցա բոլոր աղքատների տարեկան վարձը կվճարէր ինքը Աղայ Գրիգոր:

Այս գեղեցիկ բարեպաշտութեան գործի հետ Վաղարշապատաց սուրբ Աստուածածին եկեղեցին ևս նոր 'ի նորոյ ըսկըսաւ շինել տալ, որու սկզբնաւորութիւնը անելով շինութիւնը մինչև երկամարդաչափ բարձրացրուց, և կարծես թէ այս Աստուածահաճոյ գործոց կատարումը դնաց երկինքը տեսնել: Այս շինութեան հաշուին զբաղած ժամանակը կըմըսի, և մէկ քանի օր տկարութիւն զգալով յանձին՝ բանի տեղ չի դնել, մինչև որ հիւանդութիւնը կաստկանայ, և բժշկաց ջանքը օգուտ չի անել: Իւր քրիստոնէական պարտքը կատարելով խոստովանութեան և հաղորդութեան, բարի մահուամբ աւանդեց իւր հոգին առ Աստուած 'ի 15 Մայիսի 1861 այսր ամի, շաբաթ երեկոյին, սգոյ մէջ թողլով իւր ազնիւ գերդաստանը: Աիւրակէ օրը հանդիսիւ հանգուցեալը բերուեցաւ սուրբ պատարագին՝ մեծ յուզարկաւորութեամբ տարան հանգուցեալը Աթոռոյ միաբանք, և եղին 'ի դիրս հանգստեան իւր ծնողաց Վաղարշապատաց հասարակաց դերեղմաննոցը, որու վերայ՝ թէ սուրբ տաճարին մէջ խօսեցած ճառը և թէ դերեղմանի վերայ խօսեցածները՝ այս տեղս կօրինակենք\*:

Աբէլ Աբեղեանիոյ:

**ՊԵՐԳԵԼԵԿԵՆ ԿՈՆԳՐԵՍ**

Մեծաշնակաբար Աւետիս Արքեպիսկոպոս Կոնստանդնուպոլսեաց և Սուրբ Տ. Մովսէս աստուածաբանայն Սայաթնոցեաց:

ՄԱՏԹԻՆՈՍ Ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համադղական Կաթողիկոս Երարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ ԿԱԹՈՒՂՈՒՅԻ ԻՋՄԻՆՍԻՆԻ: Բարեջան Տէր Մովսէս Աւագ քահանայի Սայաթնոցեաց, Անդամոյ Կոնստանդնուպոլսեաց, հայրական սիրով ծանուցանեմք: Տեղեկացեալ մեր 'ի հաւատարմաց և 'ի յօրադրաց զգովանի գործոց Ձերոց յօգուտ ուսումնարանին Սղնախո՝ ժողովմամբ Ձերով քրտնաջան աշխատութեամբ 'ի կարծ միջոցի մեծագումար գրամոց\*\*, նոյնպէս և զանձանձիւր երկարամեայ և բազմարդիւն ծառայութեանց Ձերոց յանդամական պաշտօնատարութեան 'ի Վիճակային Ատենին Կոնստանդնուպոլսեաց, Մէք 'ի նշան մերոյ Հայրապետական օրհնութեան և զօհոնակութեան՝ առաքելք ընդ ամին զիտա՛ զարդարեալ քարամիք՝ առ 'ի կրել 'ի լանջս Ձեր, և այնու զարդացեալ 'ի շնորհս Աստուծոյ՝ յաւելցիս յև ևս օգտաւէտ վասն եկեղեցւոյ ձեռնարկս՝ ըստ սրբազան կոչման քահանայ-

\* Այդ երկու ծառայելի միւր տարբերեցաւ ճառագիւտ առջին և երկրորդ տեսակաց միջոցմ ներկայ Ռեթմ Աղգային թուականիս: Խմբագրել:  
\*\* Տէս 'ի ճառագիւտ Ռեթմ աղգ. թուակ. յիջ 113 — 115: Խմբագրել:

ութեանդ, և ուրախ արասցես զնշանութիւն քո գործովք բարութեան:

Վ. Մ. Մարտիկոս Կաթողիկոս Կոնստանդնուպոլսեաց:  
12 Սեպտեմբերի 1861.  
Ի ՍՈՒՐԲ ԷՋՄԻՆՍԻՆ:  
Հմբ 472.

**ՊԵՐԳԵԼԵԿԵՆ ԿՈՆԳՐԵՍ**

Մեծաշնակաբար Աւետիս Արքեպիսկոպոս Կոնստանդնուպոլսեաց և Սուրբ Մ. Մովսէս:

ՄԱՏԹԻՆՈՍ Ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համադղական Կաթողիկոս Երարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ ԿԱԹՈՒՂՈՒՅԻ ԻՋՄԻՆՍԻՆԻ: Մեծիմաստ Մտեր պատուելոյ Մտերեանց հոգեհարազատ որդւոյ Կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի, Մազիստրոսի Աստուածաբանութեան, և Նշանակրի Ասպետական կարգաց Սրբոյն Աննայի երրորդ աստիճանի և Սրբոյն Ստանիսլաւայ երկրորդ աստիճանի, նուիրեմք զքրիստոսական ողջոյն հայրական սիրոյ և օրհնութեան:

Որք միանգամ պանծալի հանդիսացեալ են 'ի լուութեան սիրելի ազգիս յայսմ ցանկալի դարու 'ի բարոյական կատարելութիւնս և 'ի սուրբ հաւատս քրիստոնէութեան, և մանաւանդ ողջամիտ և պաւուրական աշխատութեամբ իսկ զանուն հեղինակի իրաւամբ ժառանգեալ, արդարեւ՝ որչափ մերովսանն է՝ չիք մեր ինոյեալ նոցա զպաշտպանութիւն և զքաջաբերութիւն: Ապաքէն և զՉեզ, սիրելիդ իմ, տեսանեմ 'ի կաճառս այսօրինակ գովելի արանց. քանզի յետ յառաջագէմ հանդիսանալոյ Ձեր 'ի պաշտօնի հաւատարիմ և աշալորջ գրագրութեան 'ի Սինոդի սրբոյ Աթոռոյս, 'ի կառավարութեան Հայոց Տիկիսիսոյ առ առաջնորդութեամբ Յովհաննու Կաթողիկոսի, և 'ի քիչնև առ առաջնորդութեամբ Երջանկայիշատակ նախորդին մերոյ Ներսէս Կաթողիկոսի, յամեն 1848 մինչև ցայժմ կատարէք 'ի Վաղարիան անուանեալ ճիւղարանի զպաշտօն դասատուութեան Հայկական բարձր դպրութեանց, բնականաց ասեմ և Աստուածաբականաց, և որ առաւել պանծալին է՝ ստացեալ էք արդէն ընդ ողջոյն իսկ բովանդակութիւն Հայրենի Ազգիս մերոյ զբարեհուսակ համբաւ անուանակրութեան ողջամիտ և վսեմական հեղինակի՝ վասն 'ի լըոյս ընծայելոյ Ձեր տպագրութեամբ զընտիր ընտիր գրաւորական վաստակս՝ ըստ վարդապետութեան սուրբ գրոց և ըստ լուսաւոր բանից սրբազան Հայրապետաց Առաքելական ուղղափառ եկեղեցւոյ:

Ապաքէն քաջ իսկ զիտելով 'ի վաղուց անտի զբազմատեսակ կատարելութիւնս Ձեր 'ի բարս, յառաքելի վարս, և յուսմունս Հայրենի լեզուի, և յԱստուածաբանական գիտութեան, և զգովանի յառաջադիմութիւնոց յասպարիղի հոգևորական վաստակոց, որովք պանծալի հանդիսանայք՝ զան 'ի գործ եղեալ ազգի ազգի ընտիր հեղինակութեամբ և ուսումնական դաստիարակութեամբ փառաւորել ևս զԿաթողիկէ Սուրբ եկեղեցի Հայաստանեայց և յաւելուլ պարծանս Հայկազեան Ազգիս, յայտ առնեմք այսու Հայրապետական Կոնդակաւս մերով զծայրալիւր գոհունակութիւն մեր զՁեր ամենասիրելի և հոգևոր որդիութենէ, և որոյ յապացոյց՝ աւասիկ արժան համարիմք վարձատրել զՁեզ անվասն անուանալու իսկ զոր ընդ ամին ունիք ստանալ:

Իւր թէպէտ սովորութիւն ունիմք սովաւ միայն զձեռնադրեալս ըստ կարգի եկեղեցւոյ յաստիճան Վարդապետութեան՝ վարձատրել ըստ արժանոյն, սակայն Գուք 'ի վաղուց հետէ զվարդապետութեան կատարէք զգործ՝ ոչ միայն դասատուութեամբ կրօնական ուսմանց յու-



կացեալ ուսանողներին (ստուանդներին) և Համալսարանին չպատկանող անձանց, ամեն մինչև 500 մարդ, հաւարուեցան քաղաքիս Գորին հարձր Գերազանցութիւնից ուղարկուած ատիւթանթիւն յայտնեց ցրուելոյ համար հրամանը, որ կրկնեց նաև տեղային թաղապետը (փրիտաւը), բայց հակառակ հրամանին, ամբողջ առջեւում կանգնած ուսանողները դիմեցին դէպ ՚ի տան դուռը, իսկ մնացեալ ամբողջ սկսաւ աղաղակել, ատիւթանթիւն խօսքերը անլսելի առնելով և դաւազանները շարժելով: Այսու պատճառաւ, 162 երորդ յօդուածին համաձայն, որ վասն յանցանաց առաջը առնելոյ, և որ հրամայում է ձերբակալ առնել ոչ միայն որ և իցէ կասկածաւոր ամբողջը, այլ և խնդիր մատուցող խուժանը — հրամայեցաւ ժանտարմ անունեալ զօրաց և փօլիցիական սպասաւորաց ձեռքակալ առնել ամբողջին: Եւ որովհետև նոյն ժամանակ ամբողջի մի մասնը սկսաւ փախչել, ժանտարմները և փօլիցիայի սպասաւորները կանգնեցուցին փախչողներին, բռնեցին նաև փողոցների վերայ քանի մի երիտասարդներ, որք պատահամբ գնում էին հրապարակի վերայով: Չեռբակալ առնելով օգնեցին նաև, բոլորովին անյուսակ, քանի մի անձինք հասարակ ժողովուրդից: Ընդ ամենն ձեռքակալ եղաւ 340 մարդ, և նոյն օրը նշանակուեցաւ առանձին ժողով, որ հարկաւոր համարեց բռնուած պահել միայն 39 մարդ (որոց 22 ն ուսանողներ էին և 17 ն կամաւոր լսողներ, և Համալսարանին չպատկանող անձինք)՝ իսկ մնացեալներին (որք էին 301 հոգի) յետ քննելու և իմանալու նոցա որպիսի անձինք լինելը, ՚ի բաց թողուլ: Հրապարակի վերայ, ուր կանգնած կայր ամբողջը գտին 3 դաշնակ (Кинжалъ), և 58 մահակ (палка): Չեռբակալ առնելոյ ժամանակին՝ վերաւորուեցաւ 2 ուսանող (որոց մինը վերաւորուեցաւ ձիից և ուղարկուեցաւ հիւանդանոց), և 2 ժանտարմ, որոց մինը նոյնպէս հիւանդանոցում է: Բաց յայսցանէ, մին ժանտարմին հարուած հասուցին դաշնակով, որ մեծ վնաս չպատճառեց նորան, որովհետև կպաւ նորա հանդերձի պղնձեայ ճարմանդին:

— Ընցեալ Օգոստոս ամսի 23 ին Վիլնո քաղաքի մէջ վախճանեցաւ Նիկոլայ Արպանովիչ անունով մին մարդ, որ յայտնի էր տեղական բնակիչներին՝ որպէս աղքատ և միշտ ողորմութիւն հաւարող ոմն, բայց երևեցաւ հակառակն, այսինքն՝ թէ նա ոչ միայն աղքատ չէ, այլ և շատ և շատ հարուստ է, վասն զի թողուց յետ իւր մահուան 23,000 ռուբ. արծ. Այս գումարը նա նուիրում է (որպէս երևում է իւր կտակից) այլ և այլ Աստուածահաճոյ գործոց:

— Ըսում են թէ Փեթերպուրկից մինչև Վարշաւ եղած երկաթուղոյն շինութիւնը շուտ պիտի վերջանայ, և թէ՛ երթևեկութիւնը նորա վերայ պիտի սկսուի Գեկտեմբեր ամսին:

**ԵՐՏՆՈՒՄ**

Լրագրիս նախընթաց համարի մէջ յիշուած Չինացոց վախճանուած թագաւորն, էր եօթներորդ թագաւորն Յինկի ցեղից, և հարիւր քառասուն և չորրորդ թագաւորն՝ Չինաց թագաւորութեան հիմնուելու ժամանակից, այն է (եթէ հաւատալի թուեցի) 4,702 ամ քրիստոսից յառաջ: Կիէն-Ֆոնը, այսպէս էր նորա անունը, ծնուած էր 1831 թուականին, և թէպէտ նա Թաօ-Քուանկի երրորդ որդին էր, բայց նշանակուեցաւ նորան ժառանգ, և յաթոռ նստաւ 1850 թուականին: Չինացոց թագաւորները, Պապերի նման, փոխում են իւրեանց անունները տախտ նստելու ժամանակ, և Կիէն-Ֆոնը (որ թարգմանի ՚ի յալա-բի-ն) կոչում էր յառաջ Թէկու: Կա ունէր կին Թաթարաց ցեղից: Գրած ունի մին վիպասանութիւն Օն-Լան-Թաի զօրավարի քաջութեան վերայ: Վարում էր յոյժ անկարգ կեանք:

— Չլուած և ամենամեծ հրդեհներից յետ, որ պատահեցան

Անգղիայում, մի զինի միոյ պատահեցան երկու անբախտութիւնք երկաթուղեաց վերայ: Օգոստոսի 25 ին խալուեցան մին մինի Լոնտոնու Պրայթօնեան երկաթուղոյ երկու շոգեկառքը, մութ թօնելի մէջ, որի երկայնութիւնը է մի անգղիական միլ, այնպէս որ շատ կառք (վախօն) փչացաւ, 20 մարդից աւելի սպանուեցան և 200 ից աւելի սաստիկ վերաւորուեցան: Այս անբախտութիւնից յետոյ, պատահեցաւ մին այլ անբախտութիւն. ավրանքով գնացած շոգեկառքը, պատահելով սրընթաց շոգեկառքին՝ Լոնտոնեան ճանապարհի վերայ, ՚ի վայր է գրորում ճանապարհորդական սրընթաց շոգեկառքը 40 Փութ բարձրութիւնից, այնպէս որ ետևի կառքերը անկանում են առջևի կառքերի վերայ, և խորտակում են: Այդ անբախտութեանց ամենամանր հանգամանքները արդէն նկարագրուած են բոլոր անգղիական լրագրաց մէջ, նաև պատկերքն ևս սպուած են Լոնտոնի պատկերազարդ լրագրին մէջ:

— Lahore Chronicle օրագիրը, որ տպագրուում է Հնդկաստանում, հաղորդում է հետևեալ՝ որքան արժանի ուշադրութեան, այնքան ևս զարհուրելի տեղեկութիւնքը. «Ամենցուն յայտնի է, ասում է այդ օրագիրը, թէ Փենչապեան ճոնկիների մէջ գտանվում են շատ վայրենի գազաններ. բայց ոչ որ ՚ի հարկէ չգիտէ՝ թէ յուրաքանչիւր տարի, որքան մարդ՝ մանաւանդ երեխայք, փչանում են այդ գազաններից: Այլ երջին երկու տարւոյ միջում 899 երեխայ փչացան առաւելագէս գայլերից, որ կարելի է տեսանել հետևեալ հաշուից՝ ՚ի 1859 թուականին կերուեցաւ 6 այր մարդ, 1 կին, և 467 երեխայ, ընդ ամենն 474: Վերաւորուեցաւ 33 այր մարդ, 3 կին, և 73 երեխայ. ընդ ամենն 199: Վնաս կրողների թիւն ընդ ամենն 563: ՚ի 1860 թուականին կերուեցան 3 այր մարդ, 4 կին, և 422 երեխայ, ընդ ամենն 425: Վերաւորուեցան 24 այր մարդ, և 51 երեխայ. ընդ ամենն 75 բոլորն՝ 500»:

— Նիտերլանտիոյ թագաւորը Հոկտեմբերի 19 ին Փարիզից դուրս գալով վերադարձաւ յիւր Տէրութիւնը: Ուղեւորութեան հանդէսը նոյնպէս փառաւոր էր, որպէս և ընդունելութեանը: Կայսերուհին մնաս բարով արաւ մեծ սանդուղների ցածում, իսկ ինքն Նախկէնը ճանապարհ ձգեց մինչև յերկաթուղին:

— Պէճիքայի թագաւորը, ունելով իւրեան ուղեկից Պրապանդեան դուքսը և դքսուհին, Հոկտեմբերի 18 ին, ժամը 3 ին յետ կէս աւուր, հասաւ Լիթթիս քաղաքը, ընդ առաջ ելանելու համար Նիտերլանտիոյ (կամ Հոլլանտիոյ) թագաւորին, որ վերագառնում էր Գաղղիայից: Միւս օրը, երեկոյեան ժամը 7 ին Օգոստափառ հիւրն եկաւ, և ընդունուեցաւ երկաթուղոյ օթեւանում մեծ պատուով:

— Հունաց թագաւորը պիտի վերադառնայ Աթէն Հոկտեմ. 25 ին:

— Գաղղից Հիւսիսային երկաթուղոյն վերայ, Փարիզի և Սէն-Քլուի միջոցում, հանդիպեցան միմեանց երկու շոգեկառք, և փչացան քանի մի մարդ: Ճշմարիտ է մին Փէրդոնիտաի սասձը՝ թէ երկաթուղիքը կարճեցընում են հետաւորութիւնը... կեանքի և մահու միջոցում:

— Ղէնովայից տեսնուում է մին նոր պողաւոր աստղ, որ ծագում է երեկոյեան ժամը 9 ին, և երևում է մինչև առաւօտեան չորս ժամը: Այս աստղս ունի երեք պոչ:

— 1862 թուականի Համաշխարհական Տեսարանի համար շինում են այնպիսի մին մեծ ժամացոյց, որի հետ կարող չէ հաւասարուիլ նաև Վեստմինստերեան ժամացոյցը: Ժամացոյցի առջևի սպիտակ տախտակի (որի վերայ նշանակուած են լինում ժամերը) տրամագիծը պիտի լինի 20 անգղիական Փութ, և պիտի դրուի տեսարանի գլխաւոր դրան ճակատում:

*ԽՄԲԱԳՐԻՉ Զ. ՄՍԵՐԵԱՆՑ*